



ԱՊԱԳԱ ՆՈՐԱՐԱՐՆԵՐ

Մարտահրավեր
2023



ԿԱՊԵԼՈՎ ԱՇԽԱՐՀԸ ՏԱՐԱԿԱՆ, ԿՐՏՍԵՐ ԵՎ ԱՎԱԳ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐ

ԱՐԲԵՐԱԿ: Յունվար 15 2023

ՌՅՕ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԼԽԱԿՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐ



ՌՅՕ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ



Կապելով Աշխարհը

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պանաման այս տարի ՌՀՕ 2023-ի միջազգային եզրափակչի հյուրանկալող երկիրն է, այդ իսկ պատճառով այս տարի մենք կենտրոնացել ենք թե ինչպե՞ս կարող են ռոբոտները օգնել կապել աշխարհը:

Պանամայի ջրանցքի ավարտից ի վեր Պանաման եղել է համաշխարհային ծովային լոգիստիկայի կենտրոնական կետ: Պանամայի ջրանցքով անցնում են 144 նավային երթուղիներ, որոնք կապում են ավելի քան 160 երկրներ: Ամեն տարի մոտ 14000 մեծ նավ է օգտվում ջրանցքից: Բացի այդ Պանաման դարձել է նաև համաշխարհային ինտերնետ մալուխային ցանցի կարևոր մասը: Թվային տեխնոլոգիաների մեր ամենօրյա օգտագործումը մեծապես կախված է ենթակառուցվածքներից, ինչպիսիք են օվկիանոսների տակ գտնվող մալուխները, տվյալների կենտրոնները, արբանյակները և բջջային կապը: Կայունությունը գնալով ավելի կարևոր է դառնում ինչպես առաքման, այնպես էլ տեխնոլոգիական արդյունաբերության համար: Ռոբոտները կարող են օգնել ինչպես բեռնափոխադրումների, այնպես էլ թվային տեխնոլոգիաների ենթակառուցվածքներին ավելի անվտանգ և արդյունավետ աշխատելու համար:

2023 թվականին թիմերը կուսումնասիրեն մեր կյանքում և արդյունաբերությունում լոգիստիկայի, թվային տեխնոլոգիաների, ֆիզիկական ենթակառուցվածքների կարևորության և կայունության մասին:

Ռոբոտի առաքելությունը:

ՌՀՕ 2023 «Ապագա նորարարներ» կատեգորիայի համար **թիմերի խնդիրն է մշակել ռոբոտ, որն օգնում է մարդկանց և երկրներին կայուն կերպով կապվել:** Թիմերը կարող են ընտրել ստորև բերված երկու թեմաներից որևէ մեկը կամ կարող են կենտրոնանալ ստորև բերված երկու ոլորտների համադրության վրա:



1. Կապը ջրի վրայով

Ծովերը, գետերը և ջրանցքները շատ կարևոր են եղել ապրանքների և մարդկանց տեղափոխման համար հազարավոր տարիներ, և նրանք դեռևս շատ կարևոր դեր են խաղում: Սա է պատճառը, թե ինչու շատ քաղաքներ կառուցվել են ծովերին կամ գետերին մոտ: Շատ բաներ, որոնք դուք կգտնեք խանութներում, փոխադրվել են ջրի վրայով:

Ջրի վրայով առաքումն արդյունավետ է, բայց դեռ շատ բաներ կան, որոնք կարելի է լավացնել: Նավեր դառնում են ավելի մեծ, և դժբախտ պատահարները կարող են լուրջ հետևանքներ ունենալ: Նավերը կարող են նաև պատահաբար վնասել ստորջրյա մալուխները կամ բախվել ծովային կայանների հետ: Որոշ նավեր թափոններ են նետում օվկիանոսներում կամ գետերում, ինչը դժվար է հայտնաբերել կամ հետևել: Առաքման երթուղիներ նույնպես կարող են բացասական ազդեցություն ունենալ ստորջրյա կյանքի վրա: Նոր տեխնոլոգիաները կարող են օգնել, և ռոբոտները կարող են կարևոր դեր խաղալ ապագայում՝ կատարելով սովորական առաջադրանքներ, որոնք արվում են մարդկանց կողմից գործընթացների բարելավման միջոցով:

Մենք փնտրում ենք ռոբոտային լուծումներ, որոնք օգնում են ավելի շատ արդյունավետ բեռնափոխադրումներ կատարել ջրի վրայով, ավելի անվտանգ են և էկոլոգիապես մաքուր:



2. Կապը տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) հետ

Մեր կյանքում մենք ավելի ու ավելի շատ թվային տեխնոլոգիաներ ենք օգտագործում: Մենք օգտագործում ենք մեր բջջային հեռախոսները, սոցիալական մեդիան առցանց տեսանյութեր դիտելու համար: Խանութներն օգտագործում են ավտոմատացված տվյալներ՝ իմանալու համար, թե ինչ են վաճառել և ինչ պետք է պատվիրեն: Դուք նույնիսկ կարող եք հետևել նավերին և ինքնաթիռներին առցանց և տեսնել, թե որտեղ են գտնվում:

Այս բոլոր տվյալները, որոնք մենք ուղարկում և ստանում ենք, պետք է տեղափոխվեն ամբողջ աշխարհում: Աշխարհում առկա են բազմաթիվ ենթակառուցվածքներ, բայց այդ ենթակառուցվածքները մշտական պահպանման և բարելավման կարիք ունեն: Կան նաև խնդիրներ կապված տվյալների կենտրոնների էներգիայի ծախսի և դրա շրջակա միջավայրի վրա ազդեցության հետ և կան տարածքներ, որտեղ մարդիկ ինտերնետի հասանելիությունն դեռ չունեն:

Մենք փնտրում ենք ռոբոտային լուծումներ, որոնք օգնում են կարգավորել և պահպանել կայուն SS ենթակառուցվածքները ամբողջ աշխարհում, որպեսզի կարողանանք կապվել և շփվել:

Վերոնշյալ թեմաների մասին հավելյալ տեղեկություն կարող եք գտնել ՄԱԿ-ի SDG#9 և SDG#14 Կայուն Չարգացման Նպատակներում՝

<https://www.un.org/sustainabledevelopment/sustainable-development>